Հայոց մեծ եղեռն

Օսմանյան կայսրության և հայերի հարցը

1915 թ. Օսմանյան կայսրության իշխանություններն ընդունեցին ժամանակավոր մի օրենք, որը «իրավական» ֆող ծառայեց հայ ժողովրդի կանխամտածված զանգվածային ոչնչացման՝ ցեղասպանության համար՝ դառնալով այդպիսով մարդկային պատմության ամենադաժան և ամենաարյունալի օրենքներից մեկը: Հայոց ցեղասպանության պատմության հետազոտմանը նվիրված մասնագիտական գրականության մեջ այն հաճախակի հիշատակվում է որպես «Տեղահանության օրենք»
1
: Սակայն ցայսօր նրա և՛
բովանդակության, և՛ հրապարակման առանձնահատկությունների հետ կապված շատ հանգամանքներ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում մնում են չպարզաբանված՝ նպաստելով իրարամերժ մոտեցումների դրսևորմանը:
Վիճահարույց խնդիրներից է, օրինակ, օրենքի ընդունման և հրապարակման ամսաթվերի հարցը: Նույնիսկ այնպիսի ճանաչված ցեղասպանագետ, ինչպիսին Վահագն Տատրյանն է, իր երկու հիմնարար աշխատություններում նշում է այդ օրենքի հրապարակման երկու տարբեր ամսաթվեր՝ երկուսն էլ սխալ: Դրանցից առաջինում, որը հրատարակվել է
1995 թ., նշված է 1915 թ. մայիսի 26-ը2
: Չորս տարի հետո լույս տեսած նրա գրչին պատկանող մեկ այլ գրքում կարդում ենք, որ այդ օրենքը մամուլում հրապարակվել է 1915 թ. մայիսի 27-ին3
: Մինչդեռ թուրքական պաշտոնական վավերագրերը փաստում են, որ
առաջին ամսաթիվը վերաբերում է ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնի զեկուցագրին, որով նա դիմել է կառավարությանը և պահանջել, որ ընդունվի օրենք հայոց տեղահանության մասին4
, իսկ երկրորդը՝ օրենքի ընդունման ամսաթիվն է, այլ ոչ
թե մամուլում հրապարակման, ինչը տեղի է ունեցել հինգ օր ավելի ուշ, 1915 թ. հունիսի 1-ին պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վաքայիի» առաջին էջի վրա: Այդ ճշտումը կարևոր է, քանի որ համաձայն օրենքի 3-րդ հոդվածի՝ այն գործողության մեջ պիտի մտներ հրապարակման օրից:

ԴՈՒ

ԼՈՒԾԵԼ ԵՍ ՊԱՊԵՐԻԴ ՎՐԵԺԸ

Օսմանյան կայսրության բնակչություն և եզրութաբանություն

- 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրության բնակչությունը էթնիկ առումով բազմազգ էր: Դրա մեջ մտնում էին մի քանի մուսուլմանական էթնոսներ՝ թուրքեր, քրդեր, արաբներ, չերքեզներ, և Հյուսիսային Կովկասից ու այլ տեղերից վերաբնակեցվածներ: Քրիստոնեադավան էթնոսների մեջ առանձնանում էին հայերը, հույները, բուլղարները և այլք: Օսմանյան կայսրությունում ապրում էին նաև հրեաներ և այլ ժողովուրդներ:

- Օսմանյան կայսրության անկմանը նախորդող ժամանակաշրջանում մուսուլմանական բնակչության նույնականացման համար, եթե դրանք որոշակի էթնիկ խմբեր էին (ինչպես, օրինակ, քրդական քոչվոր ցեղերը), օգտագործվում էին «մուսուլմաններ» կամ «օսմաններ» եզրույթները, չնայած լայն իմաստով «օսմաններ» կարելի է անվանել նաև օսմանահպատակ հայերին: Նախքան Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը կայսրության պետական մարմինները բնութագրելու համար հիմնականում օգտագործվում էին «օտտոմանյան» կամ «օսմանյան» եզրույթները, ավելի հազվադեպ՝ «թուրքական», չնայած սա ընդունված անվանում է ռուսական պատմագրության մեջ (օրինակ՝ Ռուս-թուրքական պատերազմ (1877-1878)):

- Հայերի սպանություններում մասնակցություն ունեին շատ մուսուլմանական էթնոսներ, այդ թվում՝ քրդերը և չերքեզները, բայց այս գործողությունները կատարվում էին հիմնականում թուրք պաշտոնյաների կարգադրությամբ

Հայերի զանգվածային ջարդերը 1894-1896 թվականներին

- Հարյուր հազարավոր հայերի կյանք խլած 1894-1896 թվականների զանգվածային կոտորածներն ունեցան երեք հիմնական հանգրվաններ՝

- ջարդեր Սասունում,
- 1895 թվականի աշնանն ու ձմռանը հայերի կոտորածներ կայսրության ողջ տարածքում,
- ջարդեր Ստամբուլում և Վանի շրջանում, ինչի համար պատճառ դարձան տեղի հայերի բողոքները:

- Սասունի շրջանում քրդական առաջնորդները հարկատու էին դարձրել հայ բնակչությանը: Միաժամանակ թուրքական կառավարությունը պահանջեց պետական հարկերի պարտքերի մարում, որոնք սահմանվել էին առանց հաշվի առնելու քրդական կողոպուտները: Հաջորդ տարում քրդերն ու օսմանյան պաշտոնյաները հայերից պահանջեցին հարկերի վճարում, բայց հանդիպեցին դիմադրության, որը ճնշելու համար ուղարկվեց թուրքական Չորրորդ բանակային կորպուսը: Սկսվեց Սասունի հայ բնակչության կոտորածը, որի արդյունքում սպանվեց ավելի քան 3, 000 մարդ: Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսական կայսրության դեսպաններն առաջարկեցին համատեղ հետաքննող հանձնաժողով ստեղծել, բայց առաջարկը մերժվեց Բարձր դռան կողմից: Սասունի իրադարձությունների մասին Էրզրումում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Քլիֆորդ Լլոյդն արտգործնախարարություն ուղարկված իր զեկուցագրերից մեկում գրում էր.
- «Սուլթանի հայ հպատակները բառացիորեն անպաշտպան են, ինչպես գայլերով շրջապատված ոչխարի հոտը»

- Սուլթան Աբդուլ Համիդ II-ի ծաղրանկարը: «Le Rire», Փարիզ, 29 մայիսի, 1897
- Բողոքելով հայերի խնդիրների չլուծված մնալու դեմ՝ 1895 թվականի սեպտեմբերին հնչակյանները որոշեցին մեծ ցույց կազմակերպել Կոստանդնուպոսլում, բայց նրանց ճանապարհին կանգնեց ոստիկանությունը: Ցույցի ճնշման արդյունքում սպանվեցին տասնյակ և վիրավորվեցին հարյուրավոր հայեր: Ոստիկանությունը բռնում էր հայերին և հանձնում մահակներով և սառը զենքի այլ տեսակներով զինված սոֆթերին՝ Ստամբուլի իսլամական ուսումնական հաստատությունների ուսանողներին: Նրանք հայերին մինչ մահամերձ դառնալը ծեծում էին: Ջարդերը շարունակվեցին մինչ հոկտեմբերի 3-ը[21][26]: Հոկտեմբերի 8-ին Տրապիզոնում մուսուլմանները սպանեցին և կենդանի խարույկի վրա այրեցին հազարավոր հայերի: Այս իրադարձությունները ազդարարեցին Փոքր Ասիայում և Արևմտյան Հայաստանում՝ Երզնկայում, Էրզրումում, Գյումուշխանեում, Բաբերդում, Ուրֆայում և Բիթլիսում օսմանական իշխանությունների կողմից կազմակերպված հայերի զանգվածային սպանությունների մեկնարկը

- 1895 թվականի ջարդերը հանգեցրին Դաշնակցական կուսակցության կողմից Ստամբուլի Օտտոմանյան բանկի գրավման որոշման ընդունելուն: 1896 թվականի օգոստոսի 26-ին մի խումբ զինված դաշնակցականներ գրավեցին Օսմանյան բանկի շենքը, ողջ եվրոպական անձնակազմը գերի վերցրեցին և սպառնալով բանկի պայթյունով՝ պահանջեցին թուրքական կառավարությունից կատարել խոստացված քաղաքական բարեփոխումները: Բանակցությունների արդյունքում ռուսական դեսպանատան ներկայացուցիչը և բանկի տնօրեն Էդգար Վինսենթը անվտանգության սեփական երաշխավորություններով համոզեցին բանկը գրավածներին լքել բանկի շենքը: Նույն օրը իշխանությունների հրահրմամբ Պոլսում բռնկվեց հայերի նոր զանգվածային կոտորած, որին զոհ գնաց մոտ 6 000 մարդ:

- 1894-1896 թվականների ջարդերի արդյունքում զոհերի ճշգրիտ թիվն անհնար է որոշել: Մինչ բռնարարքների ավարտը Թուրքիայում գտնվող լյութերական քարոզիչ Յոհաննես Լեփսիուսը, օգտագործելով գերմանական աղբյուրները, հավաքեց հետևյալ վիճակագրությունը՝

- սպանվածներ՝ 88 243 մարդ,
- սնանկացվածներ՝ 546 000 մարդ,
- կողոպտված քաղաքներ և գյուղեր՝ 2493,
- իսլամացված գյուղեր՝ 456,
- պղծված եկեղեցիներ և վանքեր՝ 649,
- մզկիթների վերածված եկեղեցիներ՝ 328:
- Անգլիացի ուսումնասիրող Քինռոսի կարծիքով Համիդյան կոտորածներին զոհ է գնացել 50 000-ից 100 000 հայ, Բլոքսհեմը՝ 80 000-100 000, Հովհաննիսյան՝ մոտ 100 000, Ադալյանն ու Թոթենը՝ 100 000-ից 300 000, Դադրյան՝ 250 000-ից 300 000, Սունի՝ 300 000:

Երիտթուրքերի իշխանության անցնելը. Կիլիկիայի ջարդեր

- 1908 թվականին Թուրքիայի սուլթան Աբդուլ Համիդ II-ը գահընկեց արվեց և աքսորվեց Սալոնիկ: Իշխանության եկավ Երիտթուրքական կուսակցությունը, վերագործարկվեց դեռևս 1876 թ. ընդունված օսմանյան սահմանադրության գործողությունը, կասեցվեց գրաքննությունը, հայտարարվեց քաղաքական հալածանքների դադարեցման մասին: 1909 թ. մարտին Աբդուլ Համիդի կողմնակիցները Ստամբուլում խռովություն բարձրացրին՝ փորձելով վերականգնել սուլթանի իշխանությունը: Դրանից ոգևորված մոլեռանդ մուսուլմանները Կիլիկիայի Ադանա քաղաքում նախաձեռնեցին հայերի կոտորած: Իշխանությունները միջամտեցին միայն երկու օր անց, երբ արդեն սպանվել էին հազարավոր հայեր: Քաղաք ժամանած բանակային ստորաբաժանումները փոխանակ կասեցնելու ջարդերը, ընդհակառակը, միացան ջարդարարներին՝ հարձակվելով քաղաքի հայկական թաղամասի վրա, որն ամբողջությամբ հրկիզվեց: Ջարդերն անցան Կիլիկիայի այլ հայաբնակ բնակավայրերում՝ հասնելով Մարաշ և Քեսաբ:

- 1908 թվականի սահմանադրական հեղափոխությունից հետո երիտթուրքերը ճանաչեցին Աբդուլ Համիդի կողմից հայկական բնակչության հողերի բռնագրավման փաստը, բայց նրանք նաև շարունակեցին խրախուսել հայաբնակ տարածքներում մուջահիրների վերաբնակեցումը: Ռուս պատմաբան Եվգենի Տառլեն նշել է, որ երիտթուրքերը իշխանության գլուխ անցան այն հաստատ համոզմամբ, որ «ազգային հարցերը կլուծեն բոլոր ազգությունների ֆիզիկական ոչնչացմամբ, բացի թուրքերից և նրանցից, ովքեր կհամաձայնվեն անհապաղ դառնալ թուրք»: Նրանք հայտարարեցին, որ Օսմանյան կայսրությունում այլևս «չկան» հայ, հույն, արաբ և այլն, որ այնտեղ ապրող բոլոր ազգությունները «օսմանցի» են և պետք է դառնան թուրքեր, հակառակ դեպքում «մենք նրանց կկոտորենք»: 1909-1914 թթ ընթացքում բալկանյան տարածքների կորստի և Անատոլիայում 400 000 մուհաջիրների բնակեցման արդյունքում ավելացավ կայսրությունում մուսուլմանների տեսակարար կշիռը, որոնք դարձան ճնշող մեծամասնություն (19-րդ դարի կեսերին ոչ մուսուլմանները կազմում էին բնակչության 56%-ը): Տեսնելով երիտթուրքերի դժկամությունը լուծելով օսմանահպատակ հայերի առջև ծառացած խնդիրները՝ անցկացնել բարեփոխումներ, վերադարձնել սուլթան Աբդուլ Համիդի իշխանության տարիներին հայերից բռնագրավված հողերը և այլն՝ հայկական քաղաքական կուսակցությունները դադարեցրեցին համագործակցությունը Իթթիհաթ կուսակցության հետ և կրկին դիմեցին օգնության խնդրանքով եվրոպական տերություններին: Ռուսական կայսրության աջակցությամբ 1914 թվականին թուլացած Օսմանյան կայսրությանը պարտադրվեց հայկական բարեփոխումների նախագիծ, ըստ որի նախատեսվում էր հայկական վեց նահանգներից և Տրապիզոն քաղաքից ստեղծել երկու գոտի, որոնք պետք է ղեկավարվեին Բարձր դռան հետ համաձայնեցված եվրոպական տերությունների ներկայացուցիչների կողմից:

THE ARMENIAN GENOCIDE

1915

A CRIME THAT DREW THE REVULSION OF THE ENTIRE HUMANKIND

THE ARMENIAN GENOCIDE

Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

- Շատ հետազոտողների բնութագրմամբ 1914 թվականին Թուրքիայում ապրում էր մինչև 2, 5 միլիոն հայ: Բնակչության թվաքանակը խիստ պակասել է նաև ստիպողական գաղթերի հետևանքով, որոնք տեղի են ունեցել 1894-1921 թվականներին: Հազարավոր հայեր հարկադրված գաղթեցին իրենց հայրենիքից՝ 100 000-ը՝ Ռուսական կայսրություն, իսկ 200 000-ը՝ Ամերիկայի, Եվրոպայի, Աֆրիկայի և Ասիայի տարբեր երկրներ: Պահպանվել են փաստեր և վկայություններ նաև շուրջ 200 000 հայերի բռնի իսլամացման մասին:

Առաջին համաշխարհային պատերազմ. հայերի ցեղասպանություն

- Մինչ Առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքերի կառավարությունը ջանում էր պահպանել քայքայվող Օսմանյան կայսրության մնացորդները, ուստի որդեգրեց պանթյուրքիզմի և պանիսլամիզմի քաղաքականությունը: Այն ծրագրում էր հսկայածավալ մի կայսրության ստեղծում, որը տարածվելու էր մինչև Չինաստան՝ իր մեջ ներառելով Կովկասի, Միջին Ասիայի բոլոր թուրքալեզու ժողովուրդներին: Ծրագիրը նախատեսում էր բոլոր քրիստոնյա ու իսլամացված և այլ ազգային փոքրամասնությունների թրքացում: Այս ամենից ելնելով՝ ծրագրի իրականացման ճանապարհին հայ բնակչությունը դիտվում էր որպես հիմնական խոչընդոտ:

- 1908 թվականին երիտթուրքերի հեղափոխության և սուլթան Աբդուլ Համիդի գահընկեցության արդյունքում վերականգնվեց Սահմանադրությունը, որը հավասար իրավունքներ էր սահմանում Օսմանյան կայսրության բոլոր քաղաքացիների համար: Հայերի մեծ մասը հավատաց երիտթուրքերի խոստումներին՝ կարծելով, թե վերջ կտրվի իրենց տառապանքներին: Սկզբում երիտթուրք առաջնորդները հմտորեն թաքցնում էին իրենց ազգայնամոլ էությունը՝ ներկայանալով որպես Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր ժողովուրդների իրավունքների պաշտպան: Սակայն նախկինում իրավազուրկ հպատակների կարգավիճակի հնարավոր փոփոխությունն ավելի մեծացրեց թուրքերի թշնամանքը քրիստոնյաների հանդեպ: Այդ թշնամանքը ձևավորվել էր վաղուց, քանի որ նույնիսկ իրավազուրկ պայմաններում կայսրության հայ բնակչությունը անանախադեպ հասարակական, մշակութային և տնտեսական զարգացում էր ապահովում: Ցեղասպանությունը լավագույն միջոցն էր կասեցնելու այդ վերելքը, ազգային առաջադիմությունն ու վերելքը, ինչպես նաև տիրանալու տասնամյակների աշխատանքով ստեղծված հայկական հարստությանը:

Հայերի ցեղասպանության կազմակերպում

- Իթթիհաթի հեղափոխությունից հետո՝ 1908 թվականին, թուրքերի առջև ինքնահաստատվելու և ազգային ինքնությունը դիրքորոշելու նոր խնդիր առաջացավ: Կայսրության օսմանյան ինքնության ձևավերումը ավարտվեց սահմանադրությամբ, որը հավասարեցրեց Օսմանյան կայսրության բնակչության տարբեր խմբերը և թուրքերին զրկեց կայսրության կարգավիճակից: Բացի այդ, այս գաղափարախոսությունը ընկրկում էր պանթյուրքիզմի ագրեսիվ գաղափարախոսության և իսլամական դոկտրինի առջև: Իր հերթին իսլամական գաղափարախոսության դիրքերը խարխլում էին շիական Պարսկաստանի առկայությունը և Իթթիհաթի ղեկավարների աթեիստական աշխարհայացքները: Երիտթուրքերի ամենակարկառուն գաղափարախոսը սոցիոլոգ և բանաստեղծ Զիա Գյոքալփն էր, որը ձևակերպեց սկզբունքներ, որոնցով Օսմանյան կայսրությունը մասնակցեց Առաջին համաշխարհային պատերազմին: Այս սկզբունքները ներառում էին թուրքախոս մուսուլմաններով բնակեցված Թուրան երկիրը, ընդ որում Թուրանի տարածքը պետք է ընդգրկեր թուրքական էթնոսի ողջ արեալը: Փաստացի ոչ թուրքերին ոչ միայն իշխանությունից, այլև քաղաքացիական հասարակությունից բացառող այս ըմբռնումը ընդունելի չէր հայերի և Օսմանյան կայսրության այլ ազգային փոքրամասնությունների համար: Կայսրության հիմնական բնակչության համար ամենից հարմար պանթյուրքիզմը՝ որպես հիմնական գաղափարախոսություն, մի քանի տարիների ընթացքում ընդունվեց Իթթիհաթի բոլոր ղեկավարների կողմից: Առաջին հերթին կրոնապես ինքնորոշված հայերը թյուրիմացաբար գտնում էին թյուրքիզմը որպես չարյաց փոքրագույն, քան իսլամը: 1912 թվականի բալկանյան պատերազմի ժամանակ հայերը մեծամասնությամբ հակված էին օսմանիզմի գաղափարախոսության կողմը, իսկ հայ զինվորները, ավելի քան 8 000 կամավորներ, որոշիչ դեր էին խաղում թուրքական զորքերում: Ըստ անգլիական դեսպանի վկայությունների՝ բազմաթիվ հայ զինվորներ ցուցաբերում էին բացարձակ խիզախություն:

ԱՊՐԻԼ 24

դատապարտում եմ
պահանջում եմ
Հիշում եմ
և պահանջում

Օսմանյան կայսրությունը և Հայաստանի Հանրապետությունը 1918-1923 թվականներին

- Համաձայն Մուդրոսյան հաշտության պայմանագրի՝ դաշնակից տերությունները պարտավորվում էին պատժել թուրքերին և պարգևատրել հայերին: Պնդելով ռազմավարական կարևոր ճանապարհների վրա վերահսկողությունը, ռազմագերի ազատումը և Անդրկովկասից թուրքական զորքերի դուրս բերումը՝ Մեծ Բրիտանիան համաձայնեց հայկական վեց վիլայեթներից թուրքական զորքերի դուրսբերման պահանջը փոխարինել «անկարգությունների դեպքում» այդ վիլայեթներ զորք մտցնելու դաշնակիցների իրավունքով: Այնուամենայնիվ, դաշնակից ուժերը չէին պատրաստվում կատարել պայմանագրի այդ կետը: Երևանի նահանգից տարհանման ժամանակ թուրքական բանակը կողոպտեց և տարավ՝ ինչ հնարավոր էր՝ սննդամթերքի պաշար, տնային անասուններ, աշխատանքի գործիքներ, հագուստ, կահույք ու նույնիսկ դռներ, պատուհաններ և երկաթգծի գերաններ: Երբ հայկական բանակը 1918 թվականին գրավեց Ալեքսանդրապոլը, երկաթգծի կայարանում ոչ մի գնացքաքարշ կամ վագոն չկար: 1918-1919 թվականների ձմեռը սննդից, հագուստից ու դեղորայքից զրկված Հայաստանում ուղեկցվեց մարդկանց զանգվածային մահերով: Քաղցի ու ցրտի պայմաններում ողջ մնացածները դառնում էին բծավոր տիֆի զոհեր: Արդյունքում մահացավ մոտ 200 000 հայ, այսինքն՝ Հայաստանի բնակչության 20 %-ը: 1919 թվականին 8, 7 ծնելիության դիմաց մահացությունը կազմում էր 204, 2 մարդ ամեն 1000 բնակչին: Հայաստանից նահանջի ժամանակ թուրքական բանակի գործողությունները որոշ պատմաբանների կողմից գնահատվում են որպես ցեղասպանության շարունակություն:

- Թուրքիայի հայերի վտարման և ոչնչացման գործընթացը ավարտվեց 1920 թվականին հակառակ ամեն ինչի Կիլիկիա վերադարձած փախստականների և Զմյուռնիայի ջարդերի ռազմական գործողությունների արդյունքում, երբ Մուստաֆա Քեմալի հրամանատարությամբ զորքերը կոտորեցին Զմյուռնիայի հայկական թաղամասի հայերին, իսկ հետո արևմտյան տերությունների ճնշման ներքո թույլ տվեցին կենդանի մնացածներին տարհանել: Վերջին կազմակերպված համայնքի՝ Զմյուռնիայի հայերի ոչնչացումով Թուրքիայի հայ բնակչությունն իր պատմական հայրենիքում փաստացի դադարեց գոյություն ունենալ: Կենդանի մնացած փախստականները զրկեցին աշխարհով

Մշակութային ոչնչացումը

- Հայ բնակչության բնաջնջումն ուղեկցվում է հայկական մշակութային հարատևության դեմ ուղղված գործողությունների շարքով: Հայկական հուշարձաններն ու եկեղեցիները [illegible] վերածվում են դաշտերի, որտեղ զբաղվում էին եգիպտացորենի և հացահատիկի մշակմամբ, քաղաքներում հայկական թաղամասերն ավերվում էին կամ բնակեցվում էին թուրք կամ քուրդ բնակչության կողմից և անվանափոխվում էին:

- 1914 թվականին Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության հաշվեկշռում հաշվարկվում է ոչ պակաս քան 2549 ծխական համայնք, այդ թվում ավելի քան 200 վանք և ոչ պակաս 1600 եկեղեցի: Ցեղասպանության քաղաքականության իրականացման ընթացքում և էթնիկ զտումներից հետո վերացվեցին բազմաթիվ հայկական ճարտարապետության հուշարձաններ: Շատ տաճարներ ավերվեցին, ավելի շատերը վերածվեցին մզկիթների և իջևանատների: Մինչ 1960 թվականը թուրքական քաղաքականությունը կայանում էր Թուրքիայի տարածքում հայերի գոյության վկայությունների վերացման մեջ: Միայն 1960-ական թվականներին գիտնականները հայկական հոգևոր ժառանգության հուշարձանների գրանցման և փրկության հարց բարձրացրեցին: 1974 թվականին Թուրքիայում գիտնականները նույնականացրին հայկական եկեղեցիների և վանքերի 913 շինություն: Հուշարձանների կեսից ավելին չի պահպանվել մինչ մեր օրերը, իսկ մնացածներից 252-ը քանդված են և միայն 197-ն են գտնվում այս կամ այն չափով պիտանի վիճակում:

- Մշո Սուրբ Առաքելոց վանք, 20-րդ դարասկզբի լուսանկար

- Մշո Սուրբ Առաքելոց վանք, 2010 թվականի լուսանկար
- 1980-ական թվականների վերջերին և 1990-ական թվականների սկզբներին անգլիացի պատմաբան և գրող Ուիլյամ Դալրիմփլը գտավ հայկական պատմական հուշարձանների շարունակական ավերման ապացույցներ: Շատ հուշարձաններ խարխլվել էին երկրաշարժերից ու իշխանությունների անուշադրությունից, բայց կային նաև գյուղացի ոսկի որոնողների կողմից քանդված շինություններ, ովքեր փնտրում էին հայկական գանձեր, որոնք, ըստ նրանց, թաղված են եկեղեցիների տակ, կան նաև փլուզումների կանխամտածված ակնհայտ օրինակներ: Ավելի վաղ ֆրանսիացի պատմաբան Ջ. Մ. Թիերին հեռակա կարգով դատապարտվեց երեք ամիս հարկադիր աշխատանքների այն բանի համար, որ փորձել էր վերստեղծել Վան քաղաքի հայկական եկեղեցու հատակագիծը: Նա նաև նշում էր, որ 1985 թվականին իշխանությունները ցանկանում էին քանդել Օշկվանք հայկական եկեղեցին, բայց նրանց չհաջողվեց, քանի որ ընդդիմացան տեղի բնակիչները, որոնք եկեղեցին օգտագործում էին որպես հացահատիկի պահեստ: Ուիլյամ Դալրիմփլի կարծիքով՝ հայկական հուշարձանների ոչնչացումն արագացավ թուրքական պաշտոնատար անձանց վրա հարձակվող հայկական ահաբեկչական կազմակերպությունների ի հայտ գալուց հետո:

«Նեմեսիս» գործողություն

- Հիմնական հոդված՝ Նեմեսիս գործողություն

- Նեմեսիս գործողության հայտնի վրիժառուներից Սողոմոն Թեհլերյան
- 1919 թվականին Բոստոնում Դաշնակցության 9-րդ համագումարում որոշում ընդունվեց ոչնչացնել հայերի սպանություններին մասնակից երիտթուրքերի առաջնորդներին: Գործողությունը ստացավ հին հունական վրեժի աստվածուհի Նեմեսիսի անվանումը: Դավադիրների հիմնական մասը ցեղասպանությունից փրկված հայեր էին՝ լի վճռականությամբ վրեժ լուծել իրենց սպանված ընտանիքների համար:

- Գործողության ամենահայտնի զոհը դարձավ Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար և օսմանյան եռապետության անդամներից Թալեաթ փաշան: Թալեաթը երիթուրքերի մյուս առաջնորդների հետ 1918 թվականին փախավ Գերմանիա, բայց այստեղ բացահայտվեց և 1921 թվականի մարտի 15-ին Բեռլինում սպանվեց Սողոմոն Թեհլերյանի կողմից: Թեհլերյանի ձերբակալումից հետո հասարակական կարծիքը նրա դեմ էր, բայց դատական գործընթացի ժամանակ հայերի զանգվածային սպանությունների մասին տեղեկությունները փոխեցին հասարակության տրամադրվածությունը: Դատարանի կարծիքի վրա էականորեն ազդեց Յոհաննես Լեփսիուսի ելույթը՝ Օսմանյան կայսրությունում հայերի սպանությունների վերաբերյալ:

- Արդյունքում Թեհլերյանն արդարացվեց «եռապետության կառավարության գործողությունների հետևանքով տարած տառապանքների հետևանքով գիտակցության ժամանակավոր կորստի» պատճառով:

- Պատկերացնելուց փշաքաղվում եմ, որ հայերին **վառել են,կտոր-կտոր են** արել, **սովամահ** են թողե ու **գնացել** հետո ասում են, որ տենց բան չի եղե:

Մի մեծ փոս էին փորում ու բոլոր զոհերին նույն տեղը **թաղում**:



Սպասում